



Հաստատում եմ

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի  
տնօրենի ժ/պ. պ. գ. թ., դոցենտ Գ. Իսկանդարյան

13.09.2024թ.

### Կ Ա Ր Ծ Ի Ք

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնի 2024թ. սեպտեմբերի 11-ին կայացած թիվ 5 նիստի:

ԲԱԺՆԻ ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ. ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ Լ. Հովսեփյանը, բաժնի առաջատար գիտաշխատող, պ.գ.դ. Հ. Ստեփանյանը, ավագ գիտաշխատող պ.գ.թ., դոցենտ Ք. Մելքոնյանը, գիտաշխատող Կ. Սահակյանը, կրտսեր գիտաշխատողներ Վ. Թորոսյանը, Թ. Աղամալյանը:

ԼՍԵՑԻՆ. Անի Հրաչյայի Ոսկանյանի՝ «Աղանայի նահանգի հայ բնակչության բնաջնջումը և ունեզրկումը 1909-1918 թթ.» (գիտական ղեկավար՝ պ.գ.դ. Ա. Ց. Մարության) թեկնածուական ատենախոսության համար առաջատար կազմակերպության կողմից կարծիք տրամադրելու հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՆՆԵՑԱՆ. ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ Լ. Հովսեփյանը, առաջատար գիտաշխատող Հ. Ստեփանյանը, ավագ գիտաշխատող Ք. Մելքոնյանը, կրտսեր գիտաշխատողներ Թ. Աղամալյանը, Վ. Թորոսյանը:

Ելույթ ունեցողները նշեցին, որ Անի Ոսկանյանի «Աղանայի նահանգի հայ բնակչության բնաջնջումը և ունեզրկումը 1909-1918 թթ.» ատենախոսության թեման պատմագիտության ու նաև ցեղասպանագիտության ոլորտում ունի գիտական և արդիական նշանակություն՝ հաշվի առնելով թուրքական պետական ժխտողական քաղաքականության շարունակականությունն ու թուրքական ակադեմիական շրջանակների հետևողականությունն այդ հարցում: Ուսումնասիրվող թեման արդիական է, քանի որ համակողմանի ուսումնասիրության է ենթարկվել 1909 թվականին Աղանայի կոտորածների, ինչպես նաև Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին աղանահայության զանգվածային ունեզրկման, մարդկային ու նյութական կորուստների հարցը: Աղանայի նահանգի հայ բնակչության թիրախավորումը պատահական չէր: Թուրքական իշխանությունները

հայ բնակչությանը, մեծաթիվ մարդկային կորուստներ պատճառելուց և տնտեսական զարգացումը խոչընդոտելուց բացի, կոտորածների միջոցով հարված էին հասցնում նաև Արևմտյան Հայաստանում և կայսրության այլ մասերում բնակվող հայերի սոցիալական վիճակին: Կոտորածների և ունեզրկման հետևանքով ոչնչանում էր հենց Ադանայի հայերի տնտեսության հիմնական մասը, որը կայսրության հայ բնակչության համար արտագնա աշխատանքի կենտրոն էր և ապահովում էր մեծ թվով հայերի: Համատարած կողոպուտի հետևանքով հարստանում էին տեղական և կենտրոնական իշխանությունները:

Ա. Ոսկանյանի ատենախոսությունն ինքնուրույն գիտական աշխատանք է, որը գրված է գիտական պատշաճ մակարդակով՝ տարաբնույթ աղբյուրների ու գիտական գրականության հարուստ բազայի հիման վրա:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, որոնք իրենց հերթին բաժանվում են ենթագլուխների, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից:

Ներածությունը պատկերացում է տալիս ատենախոսության թեմայի արդիականության ու նորույթի, նպատակի ու գիտական հարցադրումների, առաջադրված հետազոտական խնդիրների, մեթոդաբանության, թեմայի ուսումնասիրվածության աստիճանի և օգտագործված գրականության մասին:

Վերոնշյալ ատենախոսության նորույթն այն է, որ առաջին անգամ շրջանառության մեջ են դրվել արխիվային փաստաթղթեր և ժամանակի մամուլ՝ ներկայացնելու և քննելու հողային բռնագրավումների և ունեզրկման պետական քաղաքականության դրսևորումներն Ադանայի նահանգի օրինակով, ինչպես նաև՝ զինադադարից հետո նահանգ վերադարձած հայերի վիճակն ու նրանց գույքային առաջին պահանջները: Ելույթ ունեցողները կարևորեցին ատենախոսի օգտագործած սկզբնաղբյուրները և գիտական գրականությունը՝ փաստելով, որ կատարվել է աղբյուրագիտական ու արխիվային լայն աշխատանք: Նշվեց, որ ատենախոսը բարեխղճորեն ուսումնասիրել է թեմայի վերաբերյալ հայկական սկզբնաղբյուրները, հայերեն, թուրքերեն, ռուսերեն, անգլերեն տարաբնույթ աղբյուրներ, գիտական գրականությունն ու ուսումնասիրությունները, որոնցից որոշները, փաստորեն, առաջին անգամ են դրվում գիտական շրջանառության մեջ: Այդուհանդերձ, ցանկալի կլիներ գրականության տեսության մեջ ներառել նաև վերջին տարիներին լույս տեսած թեմատիկ գիտական գրականությունը, ինչպես օրինակ՝ Վ. Սվազյանի, Բ. Ավագյանի, Բ. Քոդամանի Ս. Ունայի հրատարակված ուսումնասիրությունը:

Ելույթ ունեցողները անդրադարձան աստենախոսության առաձին գլուխների բովանդակությանը: Առաջին գլխում՝ բաղկացած 2 ենթագլխից (Ադանայի նահանգի հայության ժողովրդագրական, տնտեսական վիճակը և 1909 թվականի կոտորածների հետևանքները) հեղինակը ներկայացնում է 19-րդ դարի երկրորդ կեսին Օսմանյան կայսրության մաս կազմող պատմական Կիլիկիայի տարածքում ձևավորված Ադանայի նահանգի հայերի ընդհանուր սոցիալ-տնտեսական վիճակը: Հայերը կարողացել էին կայուն զարգացող տնտեսական համակարգ ստեղծել, ինչի արդյունքում փոխվել էր նրանց կարգավիճակը՝ արհեստավորներից վերածվելով արդյունաբերողների: Նույն գլխում աստենախոսը մանրամասն ներկայացնում է հայերի նկատմամբ օսմանյան իշխանությունների կողմից իրականացված ցեղասպանական ծրագրի նախանշանները, առաջին ջարդերին զոհ գնացած բնակչության թիվը:

Ատենախոսության երկրորդ գլխում՝ բաղկացած երկու ենթագլխից (Ադանայի նահանգի հայերի տնտեսության վերականգնման փորձերը և օսմանյան իշխանությունների հողազրկման քաղաքականությունը), աստենախոսը ներկայացնում և վերլուծում է Ադանայի նահանգի տնտեսության վերականգնման փորձերը 1909 թվականի կոտորածից հետո՝ 1910-1914 թվականների ընթացքում: Ներկայացվում է կոտորածներն ուսումնասիրող և օգնություն տրամադրող ժամանակի տարաբնույթ կազմակերպությունների արած աշխատանքը, որոնց ջանքերով հնարավոր դարձավ մասամբ վերականգնել նահանգի հայության տնտեսական վիճակը մինչև առաջին աշխարհամարտի սկսվելը: Ուսումնասիրված է նաև 19-րդ դարավերջից օսմանյան իշխանությունների կողմից հայերի հողազրկման գործընթացը: Ներկայացված է Պոլսի հայոց պատրիարքարանի գործունեությունը՝ միտված հայոց ազգապատկան ու գրավյալ հողերի ու կալվածքների ցուցակները կազմելուն և հրապարակելուն:

Երրորդ գլխում, որը բաղկացած է երկու ենթագլխից, (Ադանայի նահանգի հայության դրությունն Առաջին աշխարհամարտի տարիներին և զինադադարի առաջին ամիսներին) ընդհանուր տեղեկություն է տրվում Ադանայի նահանգում Առաջին աշխարհամարտի տարիներին հայերի բնաջնջման և ունեզրկման մասին: Ներկայացվում են 1915 թվականի մայիսի 27-ին ընդունված՝ պատերազմի ժամանակ կառավարության գործունեության դեմ դուրս եկողների համար ռազմական տեսանկյունից առնվելիք միջոցների մասին ժամանակավոր օրենքը (տեղահանության օրենք), 1915 թվականի հունիսի 10-ին ընդունված պատերազմի և

քաղաքական արտակարգ պայմանների հետևանքով տեղահանված հայերի թողած շարժական և անշարժ կայքի հետ վարվելու մասին օրենքը: Սրանով հայկական ունեցվածքը հայտարարվում է լքյալ, որը կառավարելու համար ստեղծվում են հատուկ հանձնաժողովներ: Ատենախոսը անդրադառնում է Մուղրուսի գինադարարից հետո արքայական հայերի որոշ մասի՝ Ադանայի նահանգ վերադարձին, թուրքական իշխանության կողմից բռնազավթած գույքի հետքերը կորցնելու գործընթացին: Ատենախոսը լուսաբանում է Թուրքիայի Հանրապետության հռչակումից հետո իշխանությունների կողմից նոր օրենքները, որոնք մերժում էին ոչ մուսուլմանների գույքային ցանկացած պահանջ և բռնազաղթեցված հայերին գրկում էին երկիր մուտք գործելու արտոնագրից:

Եզրակացությունում ամփոփվում են ատենախոսության հիմնական դրույթներն ու մտահանգումները:

Ա. Ոսկանյանի ատենախոսության թեման ունի նաև կիրառական նշանակություն՝ Հայոց ցեղասպանության հետևանքով Ադանայի նահանգի կտրվածքով հայերից բռնազավթված կապիտալի մոտավոր ծավալների վերհանման գործում: Այն կարող է նպաստել արևմտահայության բռնագրավյալ գույքի և ունեցվածքի ընդհանուր ծավալի հստակեցման գործին: Ատենախոսության արդյունքները կարող են օգտագործվել նաև Հայոց պատմության և Հայոց ցեղասպանության վերաբերյալ ուսումնական ծրագրերում:

Ատենախոսության մի շարք դրույթներ, եզրահանգումներ արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված մենագրությունում և 6 հոդվածում:

Մեղմագիրը լիովին արտացոլում է ատենախոսության բովանդակությունը:

Այնուամենայնիվ, աշխատանքի հետ կապված կան որոշ դիտարկումներ և առաջարկներ, որոնք կօգնեն աշխատանքի հետագա լրամշակման ու խմբագրման գործում: Մասնավորապես.

1. Ցանկալի կլիներ ներկայացնել մեթոդաբանություն բաժնում թվարկված մեթոդների օգտագործման հիմնավորումները: Օրինակ՝ պարզ չէ, թե նշված համադրական մեթոդը ո՞ր դեպքում է օգտագործվել և ի՞նչ նպատակով:
2. Թեմայի արդիականությունն բաժնում 2020 թվականի Արցախյան պատերազմին անդրադարձը տրամաբանական կապի թերի հիմնավորվածությունն ունի: Մտահանգումից ենթադրվում է, որ Թուրքիան 2020 թվականին աջակցություն է տրամադրել Ադրբեջանին՝ Ադանայի

հայերի 1909 թվականի ունեզրկման արդյունքում կուտակած ֆինանսական միջոցների հաշվին:

3. Ատենախոսության աղբյուրագիտական հենքը և թեմայի ուսումնասիրության աստիճանը բաժնում ներկայացված գրականության տեսության վերլուծությունը թերի է: Պարզ չէ, թե ատենախոսը ներկայացրած հեղինակների աշխատությունների որ հիմնավորումների հետ է համաձայն կամ հակադրվում, թեմայի հարցում գիտական ի՞նչ բաց կա և ատենախոսության միջոցով հեղինակը գիտական գրականությունում առկա ի՞նչ բաց է լրացնում:
4. Ատենախոսության գիտական նորույթ բաժնում նշված է, որ առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրված արխիվային փաստաթղթեր և ժամանակի մամուլ: Կարծում ենք ճիշտ կլիներ նշել, որ 2017 թվականին ատենախոսը արդեն տպագրել էր թեմատիկ մենագրություն, որում նշյալ աղբյուրների մի մասը արդեն իսկ օգագործվել էր:
5. Առկա են աշխատանքի համակարգվածության որոշ խնդիրներ: Ատենախոսի մտահանգումները երբեմն կիսատ են մնում և շարունակվում են աշխատանքի այլ հատվածներում: Օրինակ՝ 91-րդ էջում անդրադարձ է կատարվում Պոլսի պատրիարքարանի կողմից հավաքված շրջաբերականներին՝ եկեղեցականների և եկեղեցապատկան գույքի վերաբերյալ սվյալներ տրամադրելու մասին, որոնք պատրիարքը պետք է ներկայացներ օսմանյան կառավարությանը: Այստեղ պատճառահետևանքային կապը կիսատ է մնում, պահանջատիրության մասին մտքի շարունակությունը հանդիպում է հաջորդ ենթագլխում՝ էջ 101-ում:
6. Կարծում ենք, աշխատանքը կշահեր, եթե հեղինակը անդրադառնար նաև տեղահանված հայերի 1910 թվականից հետո Ադանայի նահանգ վերադառնալու դրդապատճառներին, ինչի հետևանքով տեղի ունեցավ ջարդերի հաջորդ փուլը՝ Առաջին աշխարհամարտի տարիներին: Որոշ դեպքերում տարբեր խնդիրների վերաբերյալ շարադրանքում պակասում է վերլուծական հետևողականությունը, պատճառահետևանքային կապերի բացատրությունը:

7. Աշխատանքում որոշ մասնագիտական եզրույթներ բացատրված չեն, օրինակ, «Թաքրիքը», էջ 110-ում «վաքրֆ» տերմինի բացատրության համար ատենախոսը հղում է տալիս Սովետական հանրագիտարանին, մինչդեռ ավելի նպատակահարմար կլիներ նշել Enciclopedia of Islam-ը:

Վերը նշված դիտարկումները չեն ազդում ատենախոսության ընդհանուր որակի ու գիտական արժեքի վրա: Աղբյուրագիտական լայն բազայի հիման վրա հեղինակի կողմից կատարվել է հսկայական աշխատանք, որը իր ներդրումն ունի թեմայի ուսումնասիրության գործում: Այն կարելի է համարել Ադանայի նահանգի հայ բնակչության բնաջնջման և ունեզրկման ուսումնասիրությանը նվիրված հաջողված հետազոտություն:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Անի Հրաչյայի Ոսկանյանի «Ադանայի նահանգի հայ բնակչության բնաջնջումը և ունեզրկումը 1909-1918 թթ.» խորագիրը կրող թեկնածուական ատենախոսությունը բավարարում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին, իսկ նրա հեղինակն արժանի է Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի  
Թուրքիայի բաժնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ



Լ. Հովսեփյան

Հաստատում եմ՝

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի  
գիտական քարտուղար, պ.գ.թ.



Ե. Հարությունյան

13.09.2024թ.